12753

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Համբարձում Մաթևոսյան

«11» 11 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 264 - 25

Նախաձեռնող՝ ***«ԱԼՎԻՆԱ ԲՆԱԿԵԼԻ ՀԱՄԱԼԻՐ» ՍՊԸ***
ք. Երևան, Սևանի 86/2

Գործունեությունը՝ ***Արմավիր բնակավայրի Աշուղ Ջիվանու փողոց 12 հասցեում նախատեսվող բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցում***
Արմավիրի մարզ

Առդիր՝ 3 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 264 - 25

«11» 11 2025թ.

Արմավիր բնակավայրի Աշուղ Ջիվանու փողոց 12 հասցեում նախատեսվող բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«ԱԼՎԻՆԱ ԲՆԱԿԵԼԻ ՀԱՄԱԼԻՐ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության Գնահատման հաշվետվություն (այսուհետ՝ՇՄԱԳ), նախագծային փաստաթուղթ
Գործունեությունը՝	«Բ» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Արմավիրի մարզ, Արմավիր համայնք, Արմավիր բնակավայր

Ներածական մաս. «ԱԼՎԻՆԱ ԲՆԱԿԵԼԻ ՀԱՄԱԼԻՐ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) կողմից նախատեսվում է իրականացնել բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման աշխատանքներ Արմավիր բնակավայրի Աշուղ Ջիվանու փողոց 12 հասցեում:

Հողամասի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի է, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն: Հողամասի ընդհանուր մակերեսը կազմում է 1.0201 հա:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՕ-150-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 12-րդ հոդվածի 4-րդ մասի, 8-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Նախատեսվող գործունեության (այսուհետ՝ համալիր) հողամասը իրենից ներկայացնում է կառուցապատումից ազատ, ազդեցության ենթարկված ծառազուրկ տարածք: Տարածքի ռելիեֆի նիշերը տատանվում են 860-870 մետրերի սահմաններում: Բնության և պատմամշակութային հուշարձաններ, ջրային ռեսուրսներ, Կարմիր գրքերում գրանցված բույսեր և կենդանիներ տարածքում բացակայում են: Հիդրոերկրաբանական տեսակետից հայցվող տարածքում գրունտային ջրերը գտնվում են 28 մետրից խորը հորիզոններում: Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթները՝ կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն բացակայում են:

Համալիրի կառուցման տեխնիկատնտեսական ցուցանիշներն են.

- հողի ընդհանուր մակերես՝ 10201 մ²,

02543163 ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

- կառուցապատման մակերես՝ 3767.6 մ² (36.9 %),
- կանաչապատման մակերես՝ 4300.1 մ²(42.1 %),
- ասֆալտապատման մակերես՝ 2133.3 մ² (21 %):

Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրը 528 բնակարանի համար նախատեսված չորս վերգետնյա մասնաշենքերից բաղկացած կառույց է: Մասնաշենքերից երկուսը կունենան 15, իսկ մյուս երկուսը՝ 16 վերգետնյա հարկ: Համալիրը կունենա նաև երկու ստորգետնյա հարկեր, որոնք կծառայեն որպես ատոկայանատեղիներ 304 ավտոմեքենայի համար: Բոլոր մասնաշենքերի առաջին հարկերում նախատեսվում են հասարակական և կոմերցիոն տարածքներ, իսկ երկրորդ հարկերից սկսած բնակարաններ: Նախագծով համալիրի տարածքում, ինչպես նաև մուտքերի հատվածներում նախատեսված են թեքահարթակներ՝ հաշմանդամություն ունեցող անձանց և սակավաշարժ խմբերի ազատ տեղաշարժման համար: Բակային տարածքում նախատեսվում են շրջադարձային միջբակային ճանապարհներ, ճեմուղիներ, կանաչապատ պուրակ, ինչպես նաև բացօթյա ավտոկայանատեղիներ՝ գեոցանցով: Համալիրի տանիքը հարթ է, կազմակերպված ներքին ջրահեռացման համակարգով, որի շնորհիվ անձրևի և հալոցքի ջրերը կհեռանան բակային ջրահեռացման ցանց՝ միանալով անձրևատար կոյուղու հեղեղատար համակարգին:

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում կատարվելու են հողային աշխատանքներ (փորման, հիմքերի կառուցման և այլն), որի արդյունքում առաջացած հողային զանգվածից մի մասն օգտագործվելու է հետլիցքի համար, իսկ ավելցուկային հողը կհեռացվի Արմավիրի համայնքապետարանի կողմից տրամադրված համապատասխան վայր:

Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնները (յուղոտ լաթեր, վտանգավոր նյութերով չաղտոտված հող, եռակցման խարամ և այլն) կհավաքվեն առանձնացված հարթակում և կտեղափոխվեն լիցենզավորված կազմակերպությունների միջոցով: Կենցաղային աղբի կուտակման համար շինարարության և շահագործման փուլերում նախատեսվում է տեղադրել աղբի տեսակավորման աղբամաններ, աղբահեռացումը կատարվելու է պայմանագրային հիմունքներով:

Պատճառաբանական մաս. Փորձաքննական գործընթացին ներգրավել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, ինչպես նաև ոլորտին առնչվող գերատեսչությունները, ներառյալ՝ Արմավիրի մարզպետարանը, Արմավիրի համայնքապետարանը:

Օրենքով սահմանված կարգով՝ գնահատման և փորձաքննության ընթացքում Արմավիրի մարզի Արմավիր համայնքի վարչական ղեկավարի նստավայրում իրականացվել են հանրային լսումները: Հանրային երկրորդ լսման ընթացքում բնակիչների կողմից բարձրացվել են սոցիալական բնույթի բողոքներ կապված՝ աշխատանքների ընթացքում շենքի հարկայնության, վերամբարձ կռունկի, ամբարձիչի աշխատանքի, լուսավորության հետ: Նշված խնդիրների պարզաբանման կապակցությամբ «ԳԼՈԲԱԼ ՊՐՈԵԿՏ» ՍՊԸ-ն 2025թ. հոկտեմբերի 16-ի № 023 և հոկտեմբերի 23-ի № 025 գրություններով տեղեկացրել է համայնքին (պատճեն՝ լիազոր

մարմնին), որ նախագիծը կազմված է գործող քաղաքաշինական նորմերի պահանջներին և ճարտարապետահատակագծային առաջադրանքին համապատասխան:

Փորձաքննության ընթացքում ստացվել է կարծիք քաղաքաշինության կոմիտեից՝ կապված հողամասի գործառնական նշանակության փոփոխության և հարկայնության վերաբերյալ: Նշվածի վերաբերյալ Ընկերությունը ներկայացրել է միջգերատեսչական հանձնաժողովի N 2/փ-180 եզրակացությունը, որում նշված 04-001-0067-0025 կադաստրային ծածկագրով, 1.1093 հա մակերեսով հողամաս առկա չէ և միջգերատեսչական հանձնաժողովի N 2/փ-180 տվյալ եզրակացությունը չի համապատասխանում վերը նշված գործունեության տարածքին, հետևաբար առկա է փաստաթղթերի միջև անհամապատասխանություն: Ելնելով վերոգրյալից և հանրային լսման ընթացքում ներկայացված բողոքներից կազմվել է փորձաքննական տվյալ եզրակացությունը:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հիմք ընդունելով վերոնշյալ փորձաքննական հիմնավորումները և ղեկավարվելով Օրենքի 19-րդ հոդվածի 4-րդ մասով, 30-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով՝ «Ալվինա բնակելի համալիր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր բնակավայրի Աշուղ Ջիվանու փողոց 12 հասցեում նախատեսվող բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է պետական փորձաքննական բացասական եզրակացություն:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջին կարգի մասնագետ՝ Սուսաննա Անտոնյան